# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

**Իրավական ակտի նախագծի անվանում**

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

**Իրավական ակտի տեսակ**

Որոշում

**Ոլորտ**

Սոցիալական ապահովություն

**Հանրային քննարկման ժամկետ**

02/06/2025 - 17/06/2025

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 4 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 4 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

1 կողմ

0 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**17/06/2025**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| h/h | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ա"Դ"Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ<br>16.06.2025 12:14:18 | 3. Վերանայել նախագծով ամրագրված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ԽՀՄ-ների գործառույթների ( իրավիճակի ուսումնասիրություն, արձանագրության կազմում, փաստաթղթերի հավաքագրում և այլն) կազմակերպման սեղմ ժամկետները՝ , քանի որ ԽՀՄ-ին կից գործող ԽՀՀ-ները գործառույթներն իրականացնում են հասարակական հիմունքներով, իսկ դրանց պատշաճ իրականացումը նախագծով նախատեսված սեղմ ժամկետներում | Առաջարկը չի ընդունվել, կարգավորումները ներկայացվել են գործող օրենքներին համապատասխան: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրագործման առումով խնդրահարույց է: | | |
| 2 | Ա"Դ"Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ<br>16.06.2025 12:14:18 | 2. Նախագծի հավելված 1-ի 29-րդ կետում «լիազորությունների շրջանում» բառերը փոխարինել «լիազորությունների շրջանակում» բառերով: | Առաջարկն ընդունվել է: | |
| 3 | Ա"Դ"Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ<br>16.06.2025 12:14:18 | Առաջարկում ենք՝ 1. ԽՀՄ-ների կանոնադրությամբ ամրագրված երեխաների խնամքի լիազորությունների շրջանակը համապատասխանեցնել նախագծով ամրագրված ԽՀՄ-ների գործառույթներին: | Առաջարկն չի ընդունվել: ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի № 631-Ն որոշման փոփոխման, ապա այդ հարցին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն անդրադառնալու է երեխայի իրավունքների և պաշտպանության նոր համակարգի ներդրման շրջանակում: | |
| 4 | Ա"Դ"Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ<br>16.06.2025 12:14:18 | Նախագծի բովանդակության ուսումնասիրությունից ակներև է դառնում, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և լավագույն շահի պաշտպանության ոլորտում, ի թիվս այլ մարմինների, առանցքային դերակատարում ունեն նաև խնամակալության և հոգաբարձության մարմինները (այսուհետ՝ | Առաջարկը չի ընդունվել: Նախագիծը բխում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքից և համապատասխանում է այդ օրենքին: Ավելին, այդ օրենքով նախատեսված են նաև լիազորություններ, որոնք վերաբերում են պետական և | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ԽՀՄ): ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի № 631-Ն որոշմամբ հաստատված, գործող «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 9-րդ կետով ամրագրված են ԽՀՄ-ների շուրջ 32 գործառույթներ, այդ թվում՝ նաև ՀՀ օրենքներով վերապահված այլ լիազորությունների իրականացում: Կանոնադրության համաձայն՝ ԽՀՄ-ներն իրենց գործունեության ընթացքում պետք է ղեկավարվեն նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով: Նույն կանոնադրության 9-րդ կետի 2-րդ ենթակետի դ) կետով ամրագրված է, որ ԽՀՄ-ները իրականացնում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթներ, ինչը չի համապատասխանում այժմ գործող «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին: Նախագծի 21-րդ կետի 1) ենթակետի, 29-րդ , 37-րդ և 87-րդ կետերով ամրագրված երեխայի խնամքի կազմակերպմանն ուղղված ԽՀՄ-ների գործառույթների իրականացումը չի համապատասխանում կանոնադրությամբ առկա լիազորությունների շրջանակին: | տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչին համահունչ ներկայացվել է նաև համապատասխան գործիքակազմը: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի № 631-Ն որոշման փոփոխման, ապա այդ հարցին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն անդրադառնալու է երեխայի իրավունքների և պաշտպանության նոր համակարգի ներդրման շրջանակում: | |